Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LTN
262
Zugleichmitte
Zuwachsbu

1904

1999.

ԱՐՄԷՆ-ԳԱՍՊԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

մասնաւոր Ծրագիր Հայ Զարժման պատմութեան

Հրատարակութիւն Կ. Հ. Ա. Միութեան

«Մեծ քաղաքի» ճիւղի

Լեռ
262

Սեփական տպարան

1904 թ.

43964-Ա.Հ.

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ

ՊԵՏՈՒ.
ԵԳԻՊՏԱՅՈՒ
ԵՒ
Հա Ա. ՄԱԼՈՅԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Անուշ, մաեբիմ ընկերներ!

Եթէ բազդը վիճակեց ինձ ձեզ հետ չըմանել սև հողի գիրքը, գոնէ նա թոզեց մի կայծ իմ սրտում զբելու ձեր մասին, պատմելու ձեր ։ մրա վաղամեռ հերոսների գործերը, հերոսներ, որոնց թիւն այժմ մեծել, բազմացել է, որոնց առաջապահ գունդը ձեզ էլ հետևում։

262-60

ՀՖ 266

28043-62

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայկական շարժումը կայ. նա փաստ է։

Թող բղաւէ թուրք մամուլը. թող կոկորդները պատռեն թիւրքական ոսկիներով շլացած եւրոպայի վարձկան գրողները. թող կարմիր Սուլթանը հերքումներ հերքումների եռեւից տպագրել տայ, թէ ,,Հայկական շարժում չկայ, այլ միայն մի խումբ դրսից եկած խառնակիչներ են, որ խռովում են իմ հաւատարիմ ու խաղաղ հպատակներիս''. թող Օրման փաշաները, Բիւլբիւլեանները և թուրք լրտեսների ամբողջ կազմն աշխատի հերքել այդ շարժման գոյութիւնը։

Նա կայ և կլինի. քանի դեռ չէ կործանուել սուլթանական բռնապետութիւնը. քանի դեռ բազմաշարչար հայ ժողովուրդը չէ ձեռք բերել մարդավայել ապրելու պայմաններ։

Գետերով հոսած հայի տաք արիւնը սրբագործել է այդ շարժումը։ Բազմաթիւ նահատակների և անձնազոհ հերոսների մահը քաղաքացիութեան իրաւունք է տուել նրան։

Այդ շարժումն արդէն իւր մէջքի վրայ ունի 15 տարուայ մի արիւնոտ պատմութիւն։

Սովը, հալածանքը, բռնարարութիւնն ու լլկանքն են նրա մայրը։ Արիւնը եղել է նրա միւռոնը, բանտը, աքսորավայրը, կախաղանը և տաժանքը նրան ուսումներ են հանդիսացել։

Մենք հաստատում ենք, որ նրան է պատկանում լուսաւոր ապագան։ Բոլոր մանր ազգութիւնների ազատագրական շարժումները փաստաւոր վախճան են ունեցել։ Հիմա չկայ կարծելու, որ միայն մենք՝ հայերս՝ բացառութիւն ենք կազմելու այդ համամարդկային ընդհանուր օրէնքից։

Նա կայ և պատմական էւոլուցիայի դանդաղ օրէնքով կամաց-կամաց առաջ է շարժվում, իւր ուղին հարթելով։ Աճում են փաստեր, դէպքերն իրար վրայ են բարդւում։ Կուսակցութիւններն իրար են յաջորդում։ Ընկնում, բարձրանում, պառակտում, նորից կազմակերպւում են նրանք։ Դա նշան է, որ նրանք մեռած, քարացած էութիւններ չեն, այլ կեանքի հետ ապրող, նրա պայմանների հետ փոփոխւող կենսունակ ու կենսական մարմիններ։

Ազատագրական այդ սրբազան գործի սկզբներից շատերը մեռել են, շատերը յոգնել, թուլացել, մեկուսացել. շատերն էլ արդէն ծերանում են։ Մի սերունդ արդէն անցնում է, նոր սերունդն է ոտ դնում այդ փշոտ ասպարէզը, որի մէջ գործին ապառնում է բանտ, աքսոր, անօթութիւն, տանջանք ու կախաղան։

Պէտք է եռեից հասնող նոր սերնդին տալ մի հայելի, անցեալի մի համառօտ դաս։ Պէտք է տալ մի աղբիւր, որից նա օգտւի, որի մէջ նա տեսնի գոնէ իրանից առաջ եղածների այրական անձնազոհութիւնը, նրա սխալը և ուղիղը, նրա առաւելութիւնն ու թերութիւնները։ Դա անհրաժեշտ է նորանոր սխալներից ապագայ սերնդին ազատելու համար։

Այդ տեսակէտից այս գրքոյկն անհրաժեշտ է, մենք նրան լոյս ենք ընծայում։ Մենք յաւակնութիւն չունինք գրելու հայկական շարժման մանրամասն պատմութիւնը։ Մեր նպատակն է տալ մի փոքրիկ ծրագիր այդ շարժումն ուսումնասիրել ցանկացող երիտասարդներին և խմբակներին։ Յեղափոխական գործող կուսակցութիւնների խմբագրական մարմիններս, դուցէ գործով կլանուած, դուցէ և իրանց կոչման բարձրութեան վրայ չկանգնած՝ արհամարել են մինչև օր հայ երիտասարդ սերնդի այդ ամենօրեայ արդար ու անհրաժեշտ պահանջը։ Սա առաջին փորձն է, որ մենք ձեռնարկում ենք։ Անկասկած նա լիքը կլինի թերութիւններով ու խոշոր պակասութիւններով, բայց դա մեզ չէ վախեցնում։ Աւելի լաւ է մի ուղեցոյց ունենալ ձեռքում, քան զուրկ լինել ամեն տեսակ ապրիւրից։ Մենք գրում ենք լոկ յիշողութեան վրայ հիմնուած, առանց որևէ գրաւոր յիշատակարան ձեռքի տակ ունենալու, այդ պատճառով նախապէս ներողութիւն ենք խնդրում սպրդուած սխալների ու թերութիւնների համար։ Դուցէ սրա երկրորդ տպագրութիւնը աւելի լիակատար կերպարանք ստանայ։

ԵՐՄԷՆ-ԳԱՍՊԱՐ.

ՊԱՏՃԱՌՆԵՐ.

Սխալ է կարծել, թէ նոր է սկսած հայկական շարժումը։ Նրա սկիզբը պատկանում է Ղարաբաղի մելիքներին, Իսրայէլ Օրիին, Մինաս վարդապետին, Ստեփաննոս Շահումեանին, Դաւիթ Բէկին և այլն։ Ղարաբաղի կիսանկախ մելիքները դեռ ևս 18-դ դարում փորձեր էին անում անկախ մի պետութիւն կազմելու։

Միայն նրանց սխալը նրանումն էր, որ ցանկանում էին այդ բաղձալի պետութիւնը կազմել սպիտակ ցարերի հովանաւորութեան տակ. մի բռնակալութիւնն ուզում էին փոխել մի ուրիշ բռնակալութիւնով։

19-դ դարի սկզբներում Ներսէս Աշտարակցու և նրա նման անհատների, 18-դ դարում հնդկահայ գաղթականութեան նիւթապէս ապահովուած անձերի մէջ ևս ծագել էին նոյն տեսակ մտքեր։ Ներսէս Աշտարակեցին յոյս ունէր, որ Նիկոլայ Պաւլովիչի հովանաւորութեամբ Երևանի և Գանձակի նահանգները կարող են կազմել մի ինքնուրոյն, աւտոնոմ պետութիւն։ Հնդկաստանի հայերը կարծում էին, թէ սուլթաններից ու շահերից կարելի կըլինի գնել Լօռու գաւառը, Երևանի և Գանձակի նահանգները և կազմել մի սահմանադրական Եւրոպական պետութիւն։

Հնդկահայ Յակոբ Շահամիրեանը մինչև անգամ կազմել էր այդ «փողով գնված» Հայաստանի սահմանադրութիւնը։ (Տես «Փորձեր» և Երիցեանի «Յ. Շահամիրեանի գրական գործունէութիւնը» գրածք)։

Այդ բոլոր հին ծրագրների հիմնական սխալը նրանումն էր, որ կարծում էին, թէ ազատութիւնը կարելի է մուրալ, գնել, կամ խորամանկութեամբ ձեռք բերել իբր վարձատրութիւն տրած ծառայութիւնների։

Ո՛չ, ազատութիւնը չէ տրվում, այլ արիւնով է գնվում։

Գրանք ծրագիրներ էին, փայլուն, գեղեցիկ, միայն թէ նրանք ծնունդ էին մի քանի տաղանդաւոր գլուխների ու վեհ սրտերի։ Այն կողմում, երկրի սրտում ամբոխն ապրում էր եթէ ոչ բոլորովին գոհ, գոնէ այնքան ինքնաբաւական իր անտեսական, իր սատմոքսային կեանքով, որ երբէք չէր զիմում խմբական արիւնոտ միջոցների։ Բացառութիւն էր Ղարաբաղը. այնտեղի ժողովուրդը կուում էր արդէն եղած ազատութիւնը չը կորցնելու համար։ Մի խօսքով, ազատութեան ձգտող լուսամիտ, տաղանդաւոր անհատներ կային, բայց ամբոխը, մասսան անշարժ, անվրդով էր։ Հանգամանքները դեռ չէին սատիպել նրան կամայ-ակամայ, ճակատագրաբար զիմելու զէպի արեան ճանապարհը, զէպի անհաւասար կռիւը։

Ահա այդ հանգամանքներին, այդ դրդիչ պատճառներին ենք ուզում նուիրել մեր այս տետրակը։

Այդ պատճառները մենք բաժանում ենք 3 որոշ տեսակների, որոնք լինելով ծնունդ մեկ

արմատի, իրանց կարգին ազդում են այսօր և գործում իբր ինքնուրոյն և առանձին գործոններ (Ֆակտորներ)։

Դրանց մէջ ամենից մեծ և տիրող դեր կատարում է տնտեսական գործառը։ Յետոյ գալիս է քաղաքականը, իսկ յետոյ մտաւոր-բարոյականը։

Քննենք ամեն մէկին առանձին։

Ցաճիկները տիրել են մեր երկրին իբրև գինուած մի ամբոխ։ Նրանք տիրված ժողովուրդներին զրկել են զէնք կրելու իրաւունքից, որպէս զի այդ զէնքն իրանց դէմ չը դառնայ։ Նրանք տիրվածներին զրկել են զատարանում վկայութիւն տալու իրաւունքից, որպէսզի թիւրքական առանց այն էլ բարբարոս արդարադատութիւնն ազատուին և դարձնեն իսկ մի զէնք տիրողների ձեռքին։ Նրանք զրկում են տիրվածներին որոշ ձեւի, որոշ գոյնի զգեստներ կրելուց, նոյն իսկ թիւրքական ֆէս ծածկելուց։ Մի խօսքով տիրողները դառնում էին արտօնեալ դասակարգ, մի տեսակ ազնուականութիւն, իսկ տիրվածները դառնում էին «ռայիա», որ արաբերէն նշանակում է հօտ.-նախիր։

Հովիւները միշտ ապրում են հօտի հաշուով։ Թիւրքերն էլ հովիւներ էին—նրանք էլ ապրել սկսեցին իրանց հօտերի, ռայիաների հաշուով։

Զինուած ամբոխը ամէր դարձաւ և զինազուրկ արեց բազմաթիւ ժողովուրդների, որպէսզի հեշտութեամբ տիրել և ապրի նրանց հաշուով։ Թիւրքը բացառութիւն չէ, տիեզերքի բոլոր բարբարոս տիրապետողներն այդպէս են վարուել տիրուածների հետ։ Մօտաւորապէս նոյն տարբերութիւնն է եղել միջին դարերում ֆէօդալի և ճորտերի մէջ, հին դարերում պատրիկների և սորուկների մէջ, Հայաստանում ազատների և անազատների կամ շինականների մէջ։

Սկզբներում, երբ դեռ տաճիկների թիւը քիչ էր, նրանք բոլորն էլ վարիչներ, ոստիկաններ, զինուորներ, պաշտօնեաներ էին. նրանք կատարվում էին միայն և զրանով ապրում։ Զէնքն իրանց ձեռքին էր՝ բոլորը պէտք է նրանց հնազանդվէին։ Բայց երբ պետութիւնը մեծացաւ և դրա հետ միասին ահեց թէ թիւրքերի և թէ հպատակների թիւը, երբ հպատակների մէջ ընկան բոլոր, չիրնօրդցի, զիւրդի եղիպ և ուրիշ կուլտ վարժ ու ազատամիտ պատրաստ տարրեր, այն ժամանակ օգնութեան հասան մահմեդական կրօնը։ Նախկին ցեղապրական, տոհմային շրջանակները նեղ երևացին։ Զէր կարելի միմիայն տաճիկ տոհմերով տիրել և պինդ պահել տարբերների հակակշռական կայսրութիւնը։

Պէտք էր դտնել աւելի լայն ֆորմուլա, պէտք էր տիրողների շրջանը մեծացնել, որ հնար լինէր դրաւած երկրները պահել։ Եւ ահա ազդութիւնը, ծագումը այլևս բաւական չէր. ամ մահմեդական էր՝ նա օթոման էր, նա տիրող էր։ Կրօնը դարձաւ պետութեան կապող տարրը։ Ուրիշ խօսքով—բարբարոսական տոհմական հօրդան վերածվեց թէօկրատիայի։

Բայց բոլոր մահմեդականները եթէ ապրէին ռայիաների հաշուով, այն ժամանակ բոլոր ռայիաներն էլ կարող էին մահմեդական դառ-

նալ. էլ ում հաշով պէտք է ապրէին տիրողները, գէնք ունեցողները։ Սակայն այդպէս չեղաւ։ Տաճիկների և մահմեդական տարրերի աճելու հետ միասին տիրողների թիւը չափազանց շատացաւ և, բնական օրէնքով, նրանց մէջ ծընունդ առան դասակարգեր։ Տիրողներից շատերը սկսեցին պարապել խաշնարածութիւնով, երկրագործութիւնով, արհեստով և նոյն իսկ առևտրով։ Տիրողների մի մասն սկսեց ընկնել, իր նիւթական վիճակով հաւասարուել բայիանե-րին. նա նոյն բայիան էր, միայն զէնք կրելու և վկայութիւն տալու իրաւունք ունէր։ Դա էր նրա միակ առաւելութիւնը բայիայից։

Իսկ տաճիկների մեծ մասը մնաց կրկին կառավարող, տիրող տատիճանաւոր, չինովնիկ, բիւրօկրատ։

Այդ տեղին բիւրօկրատիային պահելու և կերակրելու համար թիւրք պետութիւնն իր ծընած օրից սկսած հարկ էր առնում։ Բայց որովհետև փոքր գործածութիւնը դեռ չէր թափանցել երկրի խորքերը, որովհետև ամբողջ երկիրը, բացի ծովափերի մեծ ու վաճառաշահ կենտրոններից՝ գտնւում էր բնական տնտեսութեան դրկում, պետութիւնն էլ հարկերն առնում էր բնական բերքերով—ցորենով, գարիով և այլն. ինքը ծախում էր ամեն մի գաւառի հարկը մի փոքրաւոր վաշխառուի, իսկ սա բերքեր էր հաւաքում։

Հարկերից զոյութիւն ունէին գլխաւորապէս «ուղղակի» կոչված հարկերը. անուղղակիները կամ բոլորովին չըկային կամ չափազանց քիչ էին և մինչև օրս էլ քիչ են. համեմատելով եւրոպական բոլոր պետութիւնների անուղղակի հարկերի հետ։

Հին հարկերի ամենախոշորներն ու գլխաւորներն էին «աշարը» կամ տասանորդը (երկրագործական հարկերը, որ առնում էին բերքերով՝ 10-ից մէկը կառավարութեանն էր), հողային շատ չնչին տուրքերը և «խարաճը» կամ գլխահարկը, որ յետոյ վերածուեց զինուորական տուրքի կամ «բէդէլը էսկէրիէի» (էսկէր փարասի)։

Տաճիկ պետութեան պետական տնտեսութեան այս նահապետական ձևը տևեց մինչև 1850-ական թուականները շատ չնչին էւոլիւցիայով։ Իսարկէ հարկերն աճեցին ու շատացան մինչև այդ՝ համեմատելով՝ օրինակ՝ 17-դ դարի հարկերի հետ, բայց էլի նրանք այնքան քիչ էին և համապատասխան ժողովրդի տնտեսութեան ու նրա վճարելու ընդունակութեանը, որ երկրի ազգաբնակութիւնը չէր ճնշւում, չէր տանջւում սովից, չէր տնանկանում տնտեսապէս։

Պետութիւնը պինդ պահում էր հարկերի նախնական, բնական ձևը, իսկ այդ բնական ձևն իր կարգին հաստատուն կերպով պահպանում էր պետութեան ասիական հիմքերը։

Փողի թէ քաղաքային և թէ ազատաբար երկսայրի ազդեցութիւնը կամաց-կամաց սկսել էր մուտ գործել եւրոպական վիլայէթներում, ծովափնեայ գաւառներում, երկաթուղային ապագայ գծերի խոշոր երակների ընթացքի վրայ եղած տեղերում—կարճ՝ այն տեղերում, ուր շուտով բնական տնտեսութիւնը պէտք է տեղի տար փողային և նոյն իսկ կապիտալիստական տնտեսութեան։ Յունաստան, Եգիպ-

տաս, Ռումանիա, Սերբիա, Բուլգարիա եղան այդ մտահաստության առաջին նախաձեռնողները և նրանք էլ ազատեցին ամենից առաջ, ունենալով դրա հետ մյուսին՝ մի որոշ էթնոգրաֆիական մասսա, մի որոշ ազգության ժողովուրդ։

* * *

Հայ կեանքի 18-դ և 19-դ դարերի պատմությունը և նոյն իսկ բերանացի ասանդությունները ցոյց են տալիս, որ տաճկական սուլթանների իշխանությունը մեր երկրում անունով միայն գոյություն է ունեցել։ Դաշտային տեղերը եղել են սուլթանների էական իշխանության տակ, իսկ երկրի լեռնական բոլոր մասերը եղել են տեղական թիւրդ իշխանների ձեռքին։ Քրդական այդ բեկերը նման չէին այժմեան աշիրաթների գլխաւորներին նրանցից մի քանիսը նոյն իսկ կարողանում էին ծայրայեղ դեպքում հանել տասնեակ հազարներով կուսակներ։ Նրանց կոչում էին երկրում Դերեբեյներ։

Դեռ այսօր էլ հայ երկրի սահմաններում կան այդպիսի կրկնակի իշխանության մնացորդներ։ Դերեբիմի քրդերը հպատակում են իրանց շեյխերին և բեկերին, իսկ նրա կողքին Խոզատի մուլթասարիֆը բաւականանում է նրանով, որ Դերեբիմն իր իշխանության տակ է, թէ և ոչ հարկ է տանում այնտեղից, ոչ էլ համարձակվում է երբ և է նրա մտնել լեռնային արծիների այդ բունը՝ իբրև իշխանաւոր։

Նոյն վիճակին էին առաջ Զեյթունն ու Սասունը, Մոքսը, Շատախը և Ջուլամերիկը.

նոյն վիճակին են այժմ Դերսիմները, արարատյան շատ գեղեր և այլն։ Թիւրքիան իրրեք չէ եղել մի միապաղաղ ձոյլ—ամբողջ բռնակալություն՝ իր ամենաոգոր կենտրոնական իշխանությունով ինչպես ցարերի բռնապետությունը։

Ներկայի անկախ իշխանություններից միայն արարատյան մեծ գեղապետությունները և մի քիչ էլ Դերսիմը նմանություն ունեն Դերեբեյների անկախ իշխանություններին։

Մինչև 19-դ դարի առաջին քառորդը Հայաստանը էապես հարկատու էր Դերեբեյներին և ոչ թիւրքական պետությանը։ Տաճիկն հարկն առնում էր դաշտային տեղերից. Դերեբեյը՝ լեռներից։ Քիչ չէ պատահել, որ Դերեբեյները և հայ անկախ գաւառների իշխանները իրար հետ միացած՝ դնացել են այս ինչ կամ այն ինչ տաճիկ փաշայի, Սելիմի դեմ, չարդել պետական զօրքերին։ (Տես Ինճիճեանի «Նոր Հայաստան»)։

Թիւրքական կենտրոնական իշխանությունը միշտ պատերազմի մէջ է եղել այդ տեղական մանր բռնակալների հետ, բայց մինչև 1830-ական թուականները նրան չէր յաջողում կոտրել նրանց, իրան ենթարկել։ 1830 մինչև 1840 թուականը մի քանի անգամ կուսակ, վերջապես յաջողվում է գաւառանությունով բռնել հռչակաւոր Դերեբեյ Բեգը-խան-բեյին և նրա ընկերին. մեկին քշեցին Սիլիստրիայի բերդը, միւսին Գրեյտ կղզին։ Սրի անցկացրին Բեգը-խան-բեյի ցեղի մեծ մասը, բայց ազատուեց նրա որդիներից մեկը՝ Եղդիշարը, որ Խրիմի պատերազմի ժամանակ մեծ նեղություն պատճառեց

թիւրք կառավարութեան, մօտ 50 հազար քիւրդերով դուրս թշելով տաճիկ պաշտօնեաներին՝ պնդելով, թէ այս երկիրը մերն է՝ քիւրդերինը և հայերինը՝ դուք ինչ գործ ունէք այստեղ։ Բայց Խրիմի պատերազմից յետոյ թիւրքերը նրան էլ դաւաճանութեամբ բռնեցին ու սպանեցին, իսկ նրա գօրքը բոլորովին ցրուեց։

Այսպիսով կոտրվեց Դէրէ-Բէյերի իշխանութիւնը։

Դէրէ-բէյը թագաւոր չէր ոչ էլ նրա իշխանութիւնը կանոնաւոր պետութիւն։ Նրանք հարկը առնում էին բերքերով և իրանց անձնական պահանջների չափով. իսկ հովիւների, թափառական խաշնարածների գլխաւորի պահանջները շատ էլ մեծ չէին։ Հարկերը թեթև էին և տանելի. բէյը գալիս, տանում էր Աստծու տուածից, այն էլ խղճով—առատ տարին շատ էր առնում, սակաւ տարին՝ քիչ, իսկ սովի ժամանակ նա նոյնիսկ օգնում էր «իր ֆլաներին» (իր հայերին)։ Դա մի տեսակ հայրական մանրիկ բռնապետութիւն էր։

Կառավարութիւնը յաղթեց. դէրէ-բէյերն ընկան։ Բայց դրանով քիւրդը չը դարձաւ „հատատարիմ հպատակ", ինչպէս հայը, բայիան, ինչպէս նոյն իսկ խաղաղ տաճիկը։ Ոչ, քրդական մեծ, խոշոր իշխանութիւնը փշրուեց, մանրացաւ և դարձաւ հազարաւոր մանրիկ իշխանութիւններ։ Առաջ բազմաթիւ աշիրաթներ, բէյեր ու շէյխեր հպատակւում էին դէրէ-բէյին, իսկ այժմ բոլորը դարձան մի մի ինքնուրոյն աւերիր, մի-մի մանրիկ բռնակալներ։ Կործանելով քրդական մեծ իշխանութիւնը, ուսումնասիրող տեսաբան

հպատակեցնել քիւրդերին, այլ նրանց դարձրին լեռնական աւազակներ։

Քիւրդն այժմ էլ հարկ է առնում «իր ֆլահից», միայն ոչ առաջուան պէս „խղճով", չափ ու սահմանով, այլ աւազակի նման. ինքը զէնք ունի, հայը անզէն է.—գալիս հարկ է պահանջում զէնքով, կամ իսկապէս՝ պարբերաբար գալիս կողոպտում է հային և գնում լեռները։

Այդ անթիւ աշիրէթներին զսպելու համար հարկաւոր է հարուստ ու զօրեղ մի կառավարութիւն, որ ահագին թւով զօրք զբաղեցնէ դրանով, զինաթափ անէ դրանց բոլորին, շինէ ամեն կողմ լեռնային ճանապարհներ, դաշտարնակներին զէնք տայ, և այլն։

Աստիճանաբար հայի վիճակն անել դարձաւ։ Նա ունէր այնուհետև (և այժմ էլ ունի) երկու տէր—թուրք կառավարութիւնը և քիւրդ աշիրէթը։ Նա հարկ է տալիս երկուսին էլ։

Ահա կործանման մի խոշոր տնտեսական և քաղաքական պատճառ։

* *

Նիկոլայ Պաւլովիչի դահ բարձրանալովը կործանվեց Մէսաէրնիխի „Սրբազան Դաշնակցութիւնը", բռնապետների հիմնած այդ դժոխային միութիւնը՝ ճնշելու լուսաւոր աշխարհի բոլոր ազատագրական և ազատամիտ փրկարար շարժումները։ Եւ նա կործանվեց ոչ թէ նրա համար, որ Նիկոլայ Պաւլովիչը ազատամիտ էր, կամ քիչ բռնակալ— ոչ, այլ այն պատճառով, որ այդ կոպիտ բռնակալն ունէր Կ. Պոլիսը գրաւելու, Թիւրքիան խլելու և ուրիշ շատ այնպիսի ձգտումներ, որոնք Սրբազան դաշնակցութեան

շահերին դէմ էին։

19-դ դարի առաջին քառորդում Թիւրքիան ոչնչացրեց իր Ենիչէրիներին։ 30-ական թուերին պայթեց յունական փառաւոր ապստամբութիւնը. «կլէֆտ»ները զինուած դիմադրութիւն սկսեցին Պաւլովիչը հեռացաւ Մէտտերնիխի դաշնակցութիւնից և խառնուեց թիւրքական գործերի մէջ։ Յունաստանն անկախութիւն ձեռք բերեց 1829—30 թուերին։

Ըստ չանցաւ, Եգիպտոսի Մահմետ Ալի փաշան և Եանինայի Ալի փաշան ապստամբուեցին սուլթանի դէմ։ Նիկոլայ Պաւլովիչն այժմ հանդիսացաւ թիւրքիայի պաշտպան։

Եւրոպական պետութիւնները, մանաւանդ Անգլիան, սարսափով տեսնում էին, որ Տաճկաստանն ընկնում էր ռուսական ճիրանների մէջ, որ շուտով Նիկոլայ կայսրը կարող է տիրել ամբողջ Անատոլիային, նոյն իսկ Պոլսին։

Պէտք էր յաւին դարման անել։ Եւ ահա Անգլիան ձեռք առաւ հանճարեղ Նապոլէոն Բոնապարտի ծրագիրը—,,վերանորոգել, երիտասարդացնել թիւրքիան", կազմել նրանից մի հզօր պետութիւն։ Նապոլէոնն ուզում էր այդ անել աշխարհակալական նպատակներով, իսկ Անգլիան ձգտում էր այդ բանին, որպէս զի Ռուսաստանի դէմ մի պատնէշ քաշէ, նրա և Միջերկրականի ու Պարսից ծոցի միջև մի միջնորմ պետութիւն, մի բուֆէր պետութիւն ստեղծէ։

Այդ նպատակով Անգլիան սկսեց դրդել սուլթանին զանազան ներքին կանոնաւոր օրէնքներ տարակել, հպատակներին կամ բայաներին

սկսել կամաց-կամաց դառնալ սահմանադրական պետութիւն, որպէսզի թարմանայ թիւրքիան, հզօրանայ, միաւորելով իր այն ժամանակի մօտ 30—35 միլիոն ազգաբնակութիւնը զուտ եւրոպական ձեւով։

1839-ին սուլթան Աբդ-Իլ-Մէջիդը, Սուլթան Մահմուդի որդին, հրատարակեց թանզիմաթը։ Դա մի հրովարտակ էր, որ տալիս էր քրիստոնեաներին վկայութիւն տալու, ամեն տեսակ պաշտօններ (բացի զինուորական) ստանձնելու իրաւունք, հիմնում էր դատական և նահանգական ընտրովի մէջլիսներ կամ դատական ու նահանգական ժողովներ, խառը մահմետական և քրիստոնեայ անդամներից, առանց որոնց դատապետներն ու նահանգապետները դատելու և հարկ առնելու իրաւունք չունէին։

Այդ ազատամիտ քայլը և նրան հետևող միւս ազատամիտ հրովարտակները (խատտ շէրիֆ, խատտը հումայունը) անգլիական ազդեցութեան արդիւնք էին։

Վերջապէս Անգլիան կարողացաւ օգտել Նիկողայոս կայսրի Կ. Պոլսին տիրելու անսանձ ձգտումից և յաջողեցրեց Խրիմի պատերազմը, որը տարբեր արդիւնքներ տուեց երկու պատերազմող երկրների համար ապագայում։ Այն ինչ Ռուսիան զրաց իր խայտառակ պարտութեան իսկական պատճառները և սկսեց երկաթուղիներ շինել, ճորտերին ազատել, դպրոցներ, համալսարաններ բանալ, զօրքը կանոնաւորել՝ մի խօսքով՝ ընկնել բուն եւրոպական կուլտուրայի հողի վրա, նոյն ժամանակ թիւրքիան, դրդված [illegible]

իր երկրում։ Բայց ռուսիան փող ունէր, Թիւրքիան չունէր։

Եւ ահա 500 տարի շարունակ բնական տընտեսութեան մէջ ապրող Թիւրք բռնակալութիւնը, որ ոչ մի կօպէկ պարտք չէր վերցրել օտարից, 1855 թուից մինչև 75 թիւր 20 խոշոր փոխառութիւններ կնքեց Անգլիայում, Ֆրանսիայում, Հոլլանդիայում, Բէլգիայում և մասամբ Գերմանիայում։ Պետութիւնն ընկաւ $2^1/_2$ միլիարդ հսկայական պարտքի տակ, իսկ բարենորոգումները տեղի չունեցան, և փողերն էլ կլանեցին չըտես բիւրօկրատները — մինիստրներն ու փաշաները, հարեմի ծառայողներն ու «կղլար աղա»ները։

Եւրոպացի դրամատէրերը, յենված իրանց բուրժուական պետութիւնների թնդանօթների ու նաւերի վրա, պահանջում էին իրանց դրամագլուխներն ու տոկոսները։ Թիւրքիան ստիպվեց կամաց-կամաց օտարների ձեռքը տալ իր անուղղակի հարկերը։ Այժմ արդէն հիմնված է «դէյոնը ումումիէ» կամ «Միդդէ» կամ հանրային պարտուց վարչութիւն, բաղկացած եւրոպացի բանդհոլդէրներից։ Դրա ձեռքին են մետաքսի, ոգելից ըմպելիքների։ ձկնորսութեան, ոչխարի աղի և այլ կարևոր հարկերը։ Ուրիշ պարտատէր եւրոպացիների ձեռքերին են ծխախոտի մենավաճառութիւնը, մաքսերը, ծովափերը, ծովափերի փարոսները... Պետութեանը մնում են ուղղակի հարկերը — հողային, զինուորական և երկրագործական, իսկ դրանք մեծ եկամուտ բերող հարկեր չեն։

Բոլոր լուսաւոր պետութիւնների բիւդջեների մէջ ամբողջ եկամուտի համարեա $^3/_4$-ը կազ-

մում են անուղղակի հարկերը։ Նոյնը պէտք է լինէր և Թիւրքական բիւդջետի հետ, բայց, ինչպէս ասացինք, անուղղակի հարկերն ամբողջապէս ընկել են օտար դրամատէրերի ձեռքը և կառավարութեանը մնացել են միայն ուղղակի հարկերը։

Ինչ պէտք է անէր կառավարութիւնն այդքան չնչին եկամուտով։

Նախ և առաջ նա սկսեց մեծացնել եղած հարկերի չափը։ Մի օրինակ միայն բերենք. մինչև 1850 թուականները «խարաճը», որ նման էր այժմեան զինուորական հարկին (ասկէր փարասը), առնում էր միայն 15 տարեկանից բարձր տղամարդկանցից և այն էլ մինչև 45 տարեկան հասակը. հարկի չափը եղել է մարդ-գլուխ 5-ից մինչև 10 դահեկան (40—80 կօպէկ)։ Այժմ այդ հարկը վճարում են բոլոր տղամարդիկ՝ ծնած օրից մինչև մահ, հաշված և կաղերը, և կոյրերը և գժերը, և գոսացածները թէ և շարիաթի օրէնքով դրանք ազատ պէտք է լինեն ամեն տեսակ հարկից ու տուրքից, իսկ չափը՝ օրէնքով՝ $37^1/_2$ դահեկան է, բայց առնվում է 42—60 դահեկան (3ր. 36 կ, 4ր. 80 կ.)։

Բացի դրանից՝ աւելացան և ուղղակի հարկերին ենթարկվող առարկաները, մանաւանդ տասանորդական հարկերի մէջ։ Առաջ միայն ցորենն ու գարին էին հարկի ենթակայ, այժմ երկրագործական ամեն տեսակ արդիւնքներն ենթակայ են հարկի, մինչև անգամ տան առաջի պտղատու ծառից հարկ է առնում։ Բանջարանոց, այգի, պարտէզ, խոտ, արտոյտ, մեղու, գինի մի խօսքով՝ գիւղատնտեսութեան բոլոր երևակայելի առարկաներից առնում է տասա-

նորդ։ Առաջ առնում էր բերքի $^1/_9$ մասը, իսկ այժմ օրէնքով որոշված է առնել $^1/_8$։ Եթէ դորա վրա աւելացնենք հարկերի աճուրդով ծախելու սիստեմ, կրհասկացուի, որ հարկատուն տալիս է ոչ թէ $^1/_8$-ը, այլ իր բերքի $^1/_4$-ը, $^1/_3$ ը։ Շատ յաճախ պատահում են դէպքեր, որ գիւղացին տալիս է իր բոլոր բերքը, որ իրանից ձեռք քաշեն, այլ ևս հարկ չուզեն, բայց կապիտան ու սուարին (ձիաւոր ժանդարմ) վաշխառուն ու միւդիրը չեն հանձնում։

Ահա տնտեսական քայքայման մէկ սրմատը ևս։ Այժմ դիմենք էականին—փողային տնտեսութեանը։ Սա մի հիւանդոտ երևոյթ է, որ չրհասկացան մեր յեղափոխականներից շատերը և սրբբազան միամտութեամբ հայոց հարցը դարձրին «բանուորական հարց»։

Մինչև 1877-ի ռուս-թիւրքական պատերազմը երկրագործական բոլոր հարկերը՝ առանց որևէ բացառութեան՝ առնում էին բերքերով։ Այդ բանին դիմանում էր բնական տնտեսութեան աստիճանի վրա կանգնած բայիա գիւղացին. առնում էին բերքի մի մասը. - որքան էլ շատ առնէին, էլի մի բան, գոնէ կէսը, թողնում էին գիւղացու մօտ։ Իսկ նա դրանով մի կերպ կարողանում էր ապրել։

Բնական տնտեսութիւնը և բնական բերքով հարկերն իրար համապատասխան երևոյթներ են հասարակական կեանքի զարգացման աստիճանի վրա։

Բայց, ինչպէս ասացինք, թուրք պետութիւնն ընկաւ հսկայական պարարքի տակ և տոկոսները միայն վճարելը ահագին դժուարութիւն

էր ներկայացնում։ Իսկ Եւրոպացի դրամատէրերին չէ կարելի տալ այսքան սոմար ցորեն, կամ այսքան բարդ խոտ իբր տոկոս իր տուած պարարքի. նա հնչիւն դրամ է տուել, նրա զարգացած երկրում փողը բոլոր ապրանքների, բոլոր արժէքների փոխանակութեան ընդհանուր միութիւնն է, բոլոր հարկերի ու ընտայի ընդհանուր վճարման միջոցն է և նա թիւրքիայից հնչիւն դրամ է պահանջում և ոչ բնական բերքեր։

Ահա այդ Եւրոպական կապիտալի ճնշումից ստիպուած՝ թիւրքիան ճնշում է իր ժողովրդին, ստիպում է նրան փողով վճարել իր բոլոր հարկերը, առանց նախօրօք հաղորդակցութեան ճանապարհներ շինելու, առաց բերքերը վաճառելու շուկայ ստեղծելու, կարճ՝ առանց գոնէ մանրը փողային տնտեսութիւն ստեղծելու երկրի մէջ։ Նախ պէտք է ստեղծուի մանր փողային տնտեսութիւնը. ապա փողով հարկ առնուի։

Աշարը աճուրդով գնած վաշխառուն ցորենից ցորեն է վերցնում, դարուց դարի. նա այդ կարող է արտահանել, ծախել—դրանք փչացող իրեր չեն։ Իսկ մրգերից, խոտից, առուտից և այլն՝ նա փող է պահանջում. մեղրից, գինուց, բանջարանոցներից, վարունգից—կրկին փող է ուզում։ Եւ չափը որոշողն էլ ինքն ու իր նման արիւն ծծող տզրուկներն են։

Փող են ուզում, նադդ փող, ասենք նոյն իսկ բարեխիղճ չափով։ Ուզում են ոսկի փողային հարկերի, զինուորական, ամուսնական, համիտական (նուֆուզ թէսկէրէի) տուրքերի համար։ Իսկ փող որտեղից տայ գիւղացին։ Ամեն

մարդ արդիւնաբերող է. արդիւնք ունի, բայց դրամ չունի։ Արդիւնքները գնող չկայ։ Արտահանելու էլ ճանապարհ չկայ կամ եղած ճանապարհը լիքն է թալանիչ քիւրդերով...

Հարկ են ուզում ոսկով, իսկ գիւղում միակ ոսկի ունեցողը վաշխառուն է—հայ, թուրք, քիւրդ վաշխառուն։ Դիմում է գիւղացին նրան, փոխ առնում ն 10 ոսկի 60-90—120 տոկոսով, և մի քանի տարուց յետոյ պարտքը հասնում է 40-50 ոսկու, և խեղճ գիւղացու բոլոր հողերն ու խրճիթը անցնում են վաշխառուի ձեռքը. ինքը հողազուրկ լինում, մուրացիկ, վարձկան դառնում կամ պանդխտութեան դիմում։

Բնական բերքերով հարկերը վերածուեցին փողային հարկերի։ Դա մտցրեց մի զարհուրելի խառնաշփոթութիւն երկրի գլխաւոր ազգաբնակութեան՝ հողագործ մասսայի տնտեսական կեանքի մէջ։ Նա կործանեց գիւղացու անտնութեան հիմքը և դարձրեց գիւղացուն մի հողազուրկ մուրացիկ։ Հողը կենտրոնացաւ վաշխառուների ու աւազակների ձեռքին, բայց մշակման նախկին ձևից ոչ մի մաղ առաջդիմութիւն չեղաւ։ Եւ այդ երևոյթը մի խումբ «խելքաւոր իմաստուններ» կոչեցին «պրոլետարիատի և կապիտալի մրցում»...

Սրանք են տնտեսական գլխաւոր հիմքերը։ Ի հարկէ պետութեան աղքատանալու հետ միասին պակասեց և ռոյոր ծառայողների ռոճիկը. նա մնաց լոկ թղթի վրա գրված թիւ... Եւ դրա տեղինը եղաւ կաշառակերութեան հսկայական աճումը։ Թիւրքիայում ամեն մարդ ճանաչում է. բէյին ու փաշային կարելի է կաշառել 60 կօպէկով, կէս, մէկ մէջիտիէով... Տողերիս գրողը երկու դահեկան (16 կ.) կաշառք է տուել Զմիւռնիայի անցագիր քննող «գերազանցութիւն» տիտղոսով բէյ պաշտօնեային և նա ընդունել ու հազար թէմէլլէհներ է արել... ինչով ապրի պաշտօնեան, երբ տարեկան մէկ կամ հազիւ երկու անգամ է ռոճիկ ստանում։ Միակ կանոնաւոր ռոճիկ ստացողները սուլթանի անձնական լրտեսներն են։

Հարկերի մասին օրինական գրականութեան մէջ կան մանրամասն աղբիւրներ, կարելի է նրանցից օգտվել։

Տնտեսական այս աւերիչ պատճառները 1877-ի պատերազմից յետոյ շատ զօրեղ կերպով սկսեցին քայքայել ժողովրդի տնտեսութիւնը և 1890 թուերին հասան իրանց գագաթնակէտին։

Սկսվեցին պարբերական սովերը, դրանց հետ միասին վերին ծայր խստութեան հասան հարկահանները։ Սովից ու դրամի, հնչիւն դրամի կարիքից նեղված թափառական քիւրդն էլ միւս կողմից խստացրեց իր աւերմունքները։ Ժողովրդի համար մի դուռ միայն մնաց բաց. բողոքել։

Բռնակալութիւնն սկսեց խեղդել այդ բողոքը. ժողովուրդը դիմեց արեան փշոտ ճանապարհին—նա սկսեց կամաց-կամաց պարզել ապստամբութեան կարմիր դրօշակը, որ դեռ նորնոր սկսում է բացվել ու մի քիչ ծածանվել։ Նա դեռ չէ ամբողջապէս բացվել։ Խնդիրը դեռ չէ հասունացել. երբ հարցը հասունանայ, մենք կունենանք մասսայական խոշոր շարժումներ—

5—10 հազարներով, և ոչ այժմեան նման փոքրաթիւ ու չնչին ցնցումներ։ Մինչև այժմ եղածը ճանապարհն է դէպի ընդհանուր սպառամբութիւն։

Տնտեսական օր աւուր աճող թշուառութիւնը ծնեցնում է բողոք։ Այդ բողոքին արձագանգ է տալիս գրականութիւնը. նա՝ իբր լաւ հայելի՝ ցոլացնում է կեանքի մէջ կատարված բոլոր երևոյթները։

Ժողովուրդը թշուառանում է։ Բանաստեղծը երգում է նրա թշուառութիւնը։ Բայց միայն սոխակն է անմատաբար լոկ ճլվլում։ Ժողովրդի ցաւը երգող բանաստեղծը երգում է ցաւը և դարման որոնում։ Նրան օգնութեան է հասնում մտածողը, հրապարակախօսը և միահամուռ ուժով նկարագրում է հիւանդութիւնը և բուժելու միջոցներ առաջարկում։

Մեր գրականութեան երկու հսկաները— Գամառ-Քաթիպան և Բաֆֆին նկարագրեցին թիւրքահայի ցաւը և դեղն էլ գրեցին. սուր, հրացան, գնդակ, լաւ կազմակերպութիւն, անձնազոհ, ինքնամոռաց գործունէութիւն...

Տնտեսական ու քաղաքական վատ պայմաններն ստեղծեցին ժողովրդի համար դառն վիճակ և այդ վիճակը դարձաւ գրականութեան նիւթը, վերածվեց գաղափարի։ Երիտասարդութիւնը կազմեց իր համար մի նոր բարոյական պարտականութիւն, մի նոր կրօն—հասնել օգնութեան իր տառապող եղբօրը։ Եւ այդ նոր բարոյական պարտականութիւնն աւելի զօրեղ էր և է այսօր էլ, քան ս. գրքի հնացած քարոզները։

Որքան աւելի տնտեսական կարիքը սաստկանում էր Թիւրքահայաստանում, այնքան աւելի քուրդ աւազակն ու թուրք բռնապետութիւնը իրանց քաղաքական հաւելի խստացնում էին իրանց բանտերը, թալանները, հրդեհները..., իսկ գրականութիւնն էլ դրանց հետ զուգընթացաբար աւելի ու աւելի թունաւոր, գրգռիչ էր դարձնում իր լեզուն. աւելի վճռական, նոյն իսկ յուսահատական, դառնացնող միջոցներ էր առաջարկում։

Երբ որ մայրը երկունքով
Աշխարհ բերէ երեխայ,
Հայրը սրած մի դաշոյն
Պիտի տայ նրան ընծայ։

Կարդալ-գրել լաւ բան է.
Բայց որ հասաւ քննութիւն,
Աշակերտին հարցուցէք.
Վոթել գիտէ նա արիւն։

Այդ է քարոզում, անդադար, անվերջ՝ մոծակի նման այդ է պզպզացնում մեր ժողովրդի ականջին Գամառ-Քաթիպան։

Արեան հերոսներ է նկարում Բաֆֆին իր բոլոր գրուածքներում։ Նրա Խէնթը, Սահրատը, Կարօն, Ասլանը, Աւօն, Ֆահրատը.. բոլոր-բոլոր նրա հերոսները մի-մի Հաջի-Դիմիտր, Սաեփան Կարաջա, մի-մի Լևսկիներ են։

Գամառ-Քաթիպան գրգռում է Երիտասարդին և նրան հրացան առաջարկում, Բաֆֆին նրան քշում է դէպի գաղտնի կազմակերպութիւն, դէպի յեղափոխական գործունէութիւն։

Եւ մինչև օրս մեր յեղափոխական բոլոր

կուսակցութիւնները դեռ իրականացնում են միայն նրանց առաջարկած ծրագրները, իհարկէ՝ եթէ քննենք միայն նրանց իսկական գործերը և ոչ անմիտ ֆրազները։

Գրականութեանը օգնութեան են հասնում տառապող երկրում բացվող բաւական բազմաթիւ դպրոցները, գաւառները թափանցող կրթված ուսուցիչները—ուսումը, գիտութիւնը, լրագիրը, ընթերցանութիւնը։ Ինչ էլ որ լինի, կրթութիւնը, եթէ նոյն իսկ եղուիտների տված միակողմանի, բթացնող կրթութիւնը լինի՝ կրկին մի երկսայրի սուր է. նա միշտ կրծում է բռնակալութեան հիմքերը և միշտ օգնում է ազատութեան ոգու զարգանալուն։

Այդ ընդհանուր պատճառների վրա 1878-ին աւելացան և երկու ուրիշ խոշոր պատճառներ. Բոլգարիայի ազատութիւնը և Բերլինի վեհաժողովի 61-դ յոդուածը։

Բոլգարը, երէկվայ սարուկ, խեղճ, ողորմելի, մածուն ծախող, բանջարապան ու արջ պարածող բոլգարն ազատեց։ Նրան օգնեց Սլաւոն Ցարը։ Լաւ. ինչու ուրեմն չըպէտք ազատի հայը։ Նա և աւելի հարուստ է, և աւելի խելոք, և աւելի կրթված։ Նրան օգնեց Ցարը, ինձ կօգնէ լուսաւոր Եւրոպան։

Օրինակը վարակիչ է։ Բոլգարիայի ազատութեան օրինակը շատ յարմար ժամանակ երևան եկաւ։ Տնտեսական կեանքն արդէն ծնեցրել էր ահագին դժգոհութիւն. քաղաքական բռնապետական պայմաններն ստեղծել էին ծովածաւալ թշուառութիւն ու բողոք. գրականութիւնը բորբոքում էր ժողովրդի մէջ բռնկած կրակը, նրա

բողոքին որոշ դաղափար և ձև էր տալիս։

Ահա այդ յարմար ու պարարտ հողի վրայ ընկնում է Բոլգարական ազատութեան օրինակի սերմը։ Նրանք ազատուեցին, մենք էլ կազատուենք—մտածում է հայ ժողովուրդը և ազատութեան ձգտումն ու եղած անտանելի կարգերի դէմ բողոքն աւելի ևս աճում։

Իսկ լուսաւոր Եւրոպան Բերլինի կոնգրէսի մշակած 61-դ յոդուածով յոյս է ներշնչում հային։ „Ես քո տէրն եմ, քո մասին մտածողը. քո բարեկամը“—ասում էր այդ յոդուածը հային։

Ու հայը շարժվեց և դեռ շարժվում է։

Հայի տաք արիւնը հոսել է գետերով։ Որքան աւելի է հոսում նրա արիւնը, կեանքի պայմաններն այնքան աւելի անտանելի, աւելի դժոխային են դառնում։

Մեր վերևում յիշած բոլոր պատճառները դեռ այսօր էլ կան և աւելի ևս զօրեղ չափերով։ Այդ պատճառները ծնեցրել են հայկական շարժումը։ Եթէ այսօր կախարդական որևէ միջոցով ոչնչացնենք բոլոր հայ յեղափոխական կազմակերպութիւններն ու գործիչներին, մի քանի տարուց՝ ոչ նոյնիսկ մի քանի ամսից կամ մի քանի շաբաթից յետոյ նորից կըծնին այդպիսի կազմակերպութիւններ և այդպիսի յեղափոխական գործիչներ, ու նորից կրսկսէ հոսել արիւնը... Քանի դժգոհութեան պատճառներ կան, կըլինի և դժգոհութիւնը, իսկ երբ այդ պատճառները կըչքանան. երբ կրստեղծվին աւելի լաւ ու մարդավայել կենսական պայմաններ, այն ժամանակ եղած ներկայ յեղափոխական մարմիններն ու կուսակցութիւնները կրբարոյանին և կաստաղանան նոր, ուրիշ տեսակ

ծրագիրներով ու համոզմունքներով կուսակցութիւններ։

Այժմ միայն գուտ ազատագրական-ազգային շարժում է (առանց զգալի շովինիզմի, առանց զանազան կղերական ձգտումների, իսկ այն ժամանակ կլինի կուլտուրական, սոցիալական և սոցիալ-դեմոկրատական շարժում։

Մենք շատ համառոտակի ակնարկ նետեցինք հայկական շարժման գլխաւոր պատճառների վրա, այժմ դիմենք նրա պատմութեանը։

Այդ պատճառները ծնեցրել են արդէն բաւական երկար շարքերով մի արիւնոտ պատմութիւն։ Թերթենք այդ գիրքը, շարժենք նրա արիւնոտ էջերը։

Ո՜րքան սխալ բայլեր, որքան անմիտ զոհեր... Բայց դրա հետ և որքան սրբազան անձնազոհութիւն, որքան հերոսական գործունէութիւն։

Երևելի Աստուածամարդը Նազարէթցի հանճարեղ Յիսուսը միայն 12 աշակերտ ընտրեց և էլի նրանցից մէկը դաւաճան-մատնիչ դուրս եկաւ։

Մեր պատմութեան ընթացքում պէտք է հանդիպենք շատ այդպիսի տիպերի... Միայն մաքուր մարդիկ չեն եղել մեր գործիչներ. լիքն են, վխտում են ամեն տեղ և խաչագողները, և այդ ասպարէզը լոկ ապրուստի միջոց ընտրող պարապիտներ... Բայց էլի այդ բոլորի գումարը եղել է մի քայլ առաջ ազատութեան ճանապարհի վրա։

Դիմենք ուրեմն ազատութեան ձգտողների պատմ[illegible] արիւնոտ էջերին։

54.

«Ազգային գրադարան»
NL0108399